

ՕՍԿԱՆԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ ԵԱՅԿ ԸՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԾՐԴ ԶԱՆԴԻՊՈՒՄԻՆ

ԵՐԵՎԱՆ, 27 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երկուշաբթի օր մասնակցեցաւ ԵԱՀԿ արտաքին գործոց նախարարներու Վիեննայի մէջ կայացած ճորդ հանդիպումին: Իր խօսքին մէջ Վ. Օսկանեան անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացին: Նախարար Օսկանեան կարեւոր նկատեց տագնապներու լուծման գործընթացին մէջ նոր մեթոտներու որդեգրումը: Ան կոչ ուղղեց ԵԱՀԿի, որպէսզի նոր մօտեցումներ ցուցաբերէ Լեռնային Ղարաբաղի հարցին խաղաղ լուծման: Նախարար Օսկանեան երկկողմանի հանդիպումներ ունեցաւ նաեւ Պելճիբալի արտաքին գործոց նախարար Լուի Միշելի եւ Մինսքի խմբակի համանախագահներուն հետ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՍԽԱԼՆԵՐԸ ՍՐԲԱԳԻՐԵԼ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ իր այցելուներուն վերահաստատեց իր վստահութիւնը՝ Լիբանանի կարողութեան վրայ, կառչած մնալու պատուութեան, անկախութեան եւ արժանավայել կեանքի իր իրաւունքներուն, ինչպէս նաեւ՝ լիբանանցիներու կարողութեան վրայ, պահպանելու համար Լիբանանի գոյատեւման եւ փառքի տրուելուն:

Նախագահը նաեւ նկատել տուաւ, որ Լիբանանի ներկան կը յատկանշուի իր դիմագրւած դժուարութիւնները յաղթահարելու կարողութեամբ, բայց իր պազան կախեալ է լիբանանցիներու կամքէն, մանաւանդ որ երկրին գլխաւոր երաշխիքը կը մնայ իր պաշտպանութեան միակամութիւնը պազային սկզբունքներուն շուրջ:

Լահուտ նաեւ վերահաստատեց, թէ կը հաւատայ ժողովրդավարական վարչաձեւին, որուն հովանիին ներքեւ ընտրած են ապրիլ լիբանանցիները: Ան հաւատեց, որ ժողովրդավարութիւնը կարողութիւն ունի առաջարկելու հարցերու լուծումները եւ սրբաբերելու սխալները, որովհետեւ ան առաջին եւ վերջին խօսքը կու տայ լիբանանցի ժողովուրդին:

Լահուտ ընդգծեց, որ երկիրը կը գտնուի լուրջ պայմաններու մէջ, իսրայէլեան ոտնձգութիւնները

դարձած են ամէնօրեայ՝ սպառնալիքներով եւ ցամաքային, ծովային եւ օդային սահմաններու խախտումներով: «Այս բոլորը մէկմէկ իւրաքանչիւրին կը պարտադրեն, որ իր դիրքին ու հանգամանքին մէջ ամէն բանէ վեր դասէ պազային շահը, գործակցութեան ձեռք երկարէ միւսներուն, եւ առիթ չտայ լիբանանեան կեցուածքին մէջ ստեղծելու տկար կամ բաց կէտեր, որովք կրնան ներթափանցել այդ կեցուածքը տկարացնել փորձող կողմերը, որոնց նպատակն է պարտադրել այնպիսի տարապնէր կամ լուծումներ, զորս Լիբանան նախապէս մերժած էր, որովհետեւ անոնք վնաս կը հասցնեն իր գերիշխանութեան, ժողովուրդին արժանապատուութեան եւ որոշումի պատուութեան», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ նաեւ վերահաստատեց, որ կառչած կը մնայ վարչաձեւի կոռուսներուն, այսինքն՝ օրինականութեան, օրէնքին եւ պատուութեան պաշտպանութեան: Ան նաեւ վերահաստատեց, որ այս երեք հիմքերը սերտօրէն կապուած են իրարու, եւ ինք նախանձախնդիր է տէր կանգնելու սահմանադրութեան եւ օրէնքներուն կողմէ իրեն վերապահուած դերին:

Շար.ը՝ էջ 2

ԻՍՐԱԵԼԻ ԿԸ ԶԱՆԴՆԵՆԵԼ ԱՐԻՒՆԱԸՆԴՈՒԹԻՒՆԸ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԾԻԳԵՐԸ

ԻՍՐԱԵԼԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՇԻՆԳ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ ՍՊԱՆՆԵՑԻՆ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Իսրայէլեան ուժերը երէկ հինգ պաղեստինցիներ սպաննեցին Այսրյորդանանի մէջ, հարուած մը տալով երկամսեայ արիւնահեղութեան վերջ տալու ճիգերուն:

Բախումները կը վերսկսէին այն պահուն, երբ պաղեստինցի ու իսրայէլացի պաշտօնատարներ ապահովութեան հարցերու գծով հանդիպում մը կ'ունենային Կազալի եւ Այսրյորդանանի մէջ: Պաղեստինցիները ըսին, որ բանակցութիւնները արդիւնքի մը չեն հասած:

Իսրայէլացիներուն եւ պաղեստինցիներուն միջեւ բախումները վերսկսան կիրակի գիշեր, Ռամատանի նախօրեակին: Նոյն պահուն հանդիպումները տեղի ունեցան պաղեստինեան հանրային ապահովութեան պատասխանատու զօր. Ապտէլուզէք Մաթայտէի եւ իսրայէլեան բանակի հարաւային ուժերու հրամանատար զօր. Եոմ Թոմ Սամիայի միջեւ: Իսրայէլեան բանակը հաստատեց հանդիպումին լուրը, սակայն մանրամասն



Իսրայէլացի զինուոր մը կը սպառնայ պաղեստինցիի մը՝ ձեռնառումը ցոյց տալով:

Նուժիւններ չփոխանցեց: Իսրայէլեան աղբիւրներուն համաձայն, երէկ բախումներ տեղի ունեցած են Բեթղեհէմի եւ Պէյթ Սահուրի մօտ: Բանակը աւելցուց, որ պաղեստինցի զինեալներ կրակ լացած են իսրայէլացի զինուորներուն եւ Շար.ը՝ էջ 10

ԱՅՍՈՐ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ՍԵՒ ԾՈՎԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

ԵՐԵՒԱՆ, 27 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Սեւ Ծովեան Տնտեսական Համագործակցութեան խորհրդարանական վեհաժողովի 16րդ լիագումար նիստը տեղի կ'ունենայ Երեւանի մէջ: Համագործակցութեան անդամ 11 երկիրներու կողքին վեհաժողովի աշխատանքներուն կը մասնակցին նաեւ Եւրոպական խորհուրդի, ԱՊՀ, Ռուսիա - Պիեղոուսիա Միութեան, եւ Եւրոպական Միութեան խորհրդարանական վեհաժողովներու պատուիրակութիւնները:

Շար.ը՝ էջ 10

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ



Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Բենիամին Պաքաճեան եւ նախարար Սեպուհ Յովսէփեան երեկ այցելեցին նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ արժարժեցիներ կրկնորդ հայ նախարարի մը նշանակման հարցը:

Անոնք շեշտեցին, որ ամբողջ հայ համայնքը հետամուտ է իր իրաւունքին վերականգնումին, եւ թէ նախարարի նշանակումը վեր է անձերէն կամ կողմերէն:

Նախագահ Լահուտ վերահաստատեց նախապէս տուած իր խոստումը՝ հարցին դրական լուծում տալ:

ՄԱԿ ՊԷՏՔ Է ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՆՋԻ ՏԵՆՔԹԱՇԷՆ

Կ'ԸՍԵ ԱԹԵՆԸ

Յունաստան երէկ յայտնած է, թէ ՄԱԿ պէտք է բացառուի թիւն պահանջէ թուրք կիպրացի ղեկավար Ռուսթ Տենքթաշէն, անոր այն յայտարարութեան դժով, թէ կիպրոսի վերամիացման բանակցութիւնները «ժամանակի կորուստ են»:

«ՄԱԿ եւ միջազգային համայնքը ընդհանրապէս պէտք է արձանագրեն ժխտական այս կեցուածքը, անոր պատասխանատուութիւնը փնտռեն եւ Տենքթաշէն ու թուրքիան անոր կեցուածքին համար հաշուետու դարձնեն», ըսած է կառավարութեան բանբեր Տիմիթրիս Ռեփիփաս թղթակցներու:

Տենքթաշէն Ուրբաթ օր յայտնած էր, թէ ՄԱԿի հովանաւորութեամբ բանակցութիւններէն պիտի քաշուի, եթէ իր «պետութիւնը» չճանչցուի:

Թուրքիա զօրավիզ կանգնած էր Տենքթաշի արտա-յայտութիւններուն, իսկ կիպրոս գայն ամբաստանած էր ՄԱԿի մէջ զարգացումները շանթաւի ենթարկելու յանցանքով:

Շար.ը՝ էջ 10

ՊՈՒՇ ԻՆՔՉԻՆՔ ՅԱՂԹԱԿԱՆ ԿԸ ՀՌ-ՉԱԿԵ

Մ. Նահանգներու նախագահ Ինքնուրու Քեյնսթոն ճորձ Ուոքերը Պուշ Ինքնուր յաղթական հռչակեց. յայտարարել է տք, թէ «քուէները համրուած են. ժամանակը հասած է, որ քուէները իրենց ըսելիքը ունենան»:

Ֆլորիտայի մէջ տեղի ունեցած կարճատեւ հանդիսութեան մը ընթացքին, Կիրակի օր, նահանգին պետական քարտուղարը՝ Քէթրին Էրիս, որ հանրապետական մը եւ Պուշի հետեւորդ մըն է, ինչպէս նաեւ քուէներով պարզող յանձնախումբին երկու այլ անդամներ



յայտարարած էին. թէ Պուշ 537 քուէներով Կորը պարտութեան մատնած է:

Նահանգին մէջ շուրջ 6 միլիոն քուէ նետուած է:

Փայմ Պիշ քառնթիի քուէներով պարզող յանձնախումբին ատեն նապետը՝ դատաւոր Չարլզ Պարթըն, յայտնած է, որ Կոր Ֆլորիտայի ընդհանուր քուէներուն մէջ 215 հազ 225 յաւելեալ քուէ պիտի ստանար եթէ Հէրիս քառնթիին 2 ժամ աւելի տուած ըլլար՝ իր աշխատանքը աւարտելու համար, փոխանակ պնդելու, որ քուէահամարի բոլոր արդիւնքները պէտք է մինչեւ Կիրակի գիշեր յանձնուած ըլլան:

Ֆլորիտայի արդիւնքներուն պաշտօնապէս ընդունուիլը քաղաքական եւ հոգեբանական հարուած մըն էր դեմոկրատ

Շար.ը՝ էջ 10

TROISIEME SESSION! RESULTATS ??? ANNEE SCOLAIRE RATEE ??!

ACADEMIE SOTHYS D'ESTHETIQUE ELYSSAR

SUIVEZ NOTRE PROGRAMME D'ESTHETIQUE / COSMETIQUE SPECIALEMENT CONCU POUR VOUS

INSCRIPTION : JUSQU'AU 30/11/00 - TEL: 03 ET OU 04 414079

DIPLOME D'ETAT

ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՑԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԱՄԱԿԸ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երէկ առաւօտ, Արամ Ա. կաթողիկոս Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանին ճամբով ստացաւ նամակ մը Ֆրանսայի Օերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնսելիէն: Յիշեալ նամակին մէջ Օերակոյտի նախագահը շնորհակալութիւն յայտնել է տք վեհափառ հայրապետին իրեն ուղղած գնահատանքի նամակին համար, կը բացատրէ, թէ ինչ պայմաններու մէջ Օերակոյտը որդեգրած էր Հայկական Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը: Օերակոյտի նախագահը այս առիթով նաեւ կը բաժնէ հայ ժողովուրդին արտայայտած գոհունակութիւնն ու ուրախութիւնը. միաժամանակ մաղթելով, որ հայերը եւ թուրքերը երկխօսութեան մը ձեռնարկեն, ի խնդիր խաղաղ ապագայի:

ՄԱՍՈՐ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՀՈՐԾ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄՈՒՄ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայակոչական ընդլիցի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր գանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը լինենք...
- Յիշատակելիները
- Հ. Յ. Գ. եւ հայութեան դժ ոճիրներ
- Հայրենական արձագանգներ
- Սփիւռեան արձագանգներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

ՉԵՆՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔԻՆ ՎԵՐՍՎԱԿԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԿՆՏԱԿԱՆ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՇԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԱՐԱԳ ԸԱԿԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒԺԻ ՍԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ

Ռուսիա մօտ առեւտրային հարաբերությունները կարգավորելու և վերականգնելու գծով, յայտնված է Ռուսիայի պաշտպանության ճարտարարուեստի պատասխանատու նախարարը անցեալ շաբաթավերջին:

Ըստ լրատու գործակալությունների, փոխ վարչապետ Իլիա Բլեպանով կարեւորություն չէ ընծայած իրեն հակադարձություն պատժամիջոցներ հաստատելու ամերիկեան սպանդանիքին, յայտնելով, որ Ռուսիա Ուաշինգթոնի ՕԹԱՆեան դաշնակիցներին առեւտրային շրջանակներում չի ընդունում:

Ամերիկացի պաշտօնատարներ Հինգզաբթի օր պոլիտեխնոլոգիայի, թէ Ռուսիա կրանայ տնտեսական պատժամիջոցներ դիմադրելու էր 1995 թ. մեկ համաձայնագիրը, որ Իրանի առեւտրային կապերը վաճառքը կը սահմանափակէ:

Ռուսիա կը ծրագրէ Գեկտեմբեր 1ին քաշուիլ Մ. Նահանգներու փոխ նախագահ Ալ Կորի եւ Ռուսիայ այդ օրերու վարչապետ Վիքտոր Չեռնոմիրովի միջեւ կնքուած համաձայնագրէն:

Բլեպանով յայտնած է, թէ համաձայնագիրին ի պօրու եղած ժամանակաշրջանին Իրանի հետ նոր պայմանագրություններու շուրջ բանակցություններու չէ դիմած Մոսկուա:

Ան աւելցուցած է, որ Մ. Նահանգներ պէտք է հսկեն ՕԹԱՆի մէջ իրենց դաշնակիցներուն գործունէութիւնը, ըսելով, որ անոնք «արդէն սկսած են Իրանի հետ գործակցիլ կիրառական արհեստագիտութեան մարպիւն մէջ գործակցութեան գծով»:

Վարչապետ Միխայիլ Բախանով ամերիկեան հակադարձութեան գծով յայտնած է, թէ անակնկալ է եւ թէ «որեւէ պատճառ չկայ խիստ ուժեղ կամ գայթակղեցուցիչ արտայայտութիւններու»:

Ռուսիա միջազգային իր բոլոր յանձնառությունները կը յարգէ, շեշտած է ան, հերքելով, որ իր երկիրը վէճերը հակակշիռի տակ առնէ նպատակաւորող որեւէ համաձայնագիր բռնաբարած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔՈՇԹՈՒՆԻՅԱ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՒ

Երկրորդ անգամ Վոլոդիմիր Քոշտենիցա երկէ յայտնած է, թէ ՄԱԿի եւ ՕԹԱՆի անմիջական օժանդակութեան կը դիմէ՝ Բոսնիայի սահմանակից գոտիի մը մէջ ապահովութիւնը վերահաստատելու համար: Այդ գոտիին Փրեսեւո Տովոսի մէջ, ծագումով ալ պանացիներ սերպ ոստիկաններ սպաննած են:

Վրենայի մէջ ԵԱՀԿի 55 անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներուն առջեւ խօսք առնելով, Քոշտենիցա զիտել տուած է, որ բոսնիացիները թափ կը ստանան եւ թէ ինք ըստ մտահոգ է:

Ան ըսած է, թէ միջազգային համաձայնութիւն մը, որ սերպական ապահովութեան ուժերու կ'արգիլէ սահմաններուն հսկել՝ թերի է, իսկ ՕԹԱՆեան խաղաղարար ուժեր չեն կրցած ծայրայեղականներ հետո պահել լըծանէն:

Ան չէ յայտնած, թէ արդեօք Պելկրատ պիտի գործադրէ՝ ապահովութեան իր սեփական ոստիկանները շրջանին մէջ հաստատելու ծրագիրը, երբ 48 ժամուան դինսողուլը վերջ գտնէ (Երկուշաբթի գիշեր):

Մինչ այդ, հարաւային Սերպիոյ մէջ ծագումով ալ պանացիներ յայտնած են, թէ որոշած են զինազուլը մինչեւ Ուրբաթ օր երկարածգի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՃԱՓՈՆ - ՌՈՒՍԻԱ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՃԻԳԵՐ

Ճափոնի արտաքին գործոց նախարարը յառաջիկայ ամիս Ռուսիա պիտի մեկնի՝ հողային բանավեճ մը լուծելու նպատակով բանակցություններու համար, ինչպէս նաեւ տարեկերէնի առաջ վարչապետ Եոշիւր Մորիի Մոսկուա այցելութեան մը ճամբան հարթելու նպատակով, յայտնած են Ճափոնական լրատու աղբիւրները կիրակի օր:

«Քիոսո» լրատու գործակալութիւնը հաղորդած է սակայն, որ նուաճումի մը հաւանականությունը շատ փոքր է:

Եթէ արտաքին գործոց նախարարին այցելությունը յաջողի, ապա Մորի ռուսական էրթուքը քաղաքը պիտի մեկնի նախագահ Վլատիմիր Փութինի հետ տեսակցութեան մը համար՝ խաղաղութեան համաձայնագիրի մը կնքումին ճամբան հարթելու նպատակով, ըսած է «Քիոսո»:

Մորի այս ամսուան սկիզբը տեսակցութիւն մը ունեցած է Պրուսայի ԱՍԻԱՆի վեհաժողովին առընթեր եւ երկու ղեկավարները որոշած են դարձեալ հանդիպում մը ունենալ Պայքալ լիճին մօտ գտնուող Իրթուք քաղաքին մէջ, հաւանաբար՝ մինչեւ տարեկերէն, Բ. Աշխարհամարտի պաշտօնապետ վերջ տուող համաձայնագիր մը կնքել փորձելու համար:

Փութինի նախորդը՝ Պորիս Ելցին է այդ օրերու Ճափոնի վարչապետ Ռիւրոս Վաչիւրով, 1997ին որոշած էին մինչեւ 2000 թուականի աւարտ համաձայնագիր մը ապահովել փորձել: Այժմ այդ ժամկետին իրագործումը գրեթէ անկարելի կը նկատուի:

(ՌՈՅԹԸՐԸ)

Միացեալ Նահանգներ հրապարակաւ պահանջներու արտայայտած են եւրոպական արագ հակադարձութեան ուժի մը կազմութեան առաջարկին, այս գծով քաջալերելով Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրը:

60 հազար կիւնտրութեան հարկանալիք ուժին 12,500 կիւնտր հայթայթելու յանձնառութեան տակ մտնելի ի վեր անցեալ շաբաթ, Պլեյր քննադատներու կողմէ խիստ յարձակողականի ենթարկուած է: Անոնք կ'ըսեն, թէ այդ ուժերը ի վնաս ՕԹԱՆի պիտի ըլլան եւ պիտի վնասեն Մ. Նահանգներու հետ Բրիտանիոյ դաշնակցությունը:

Սակայն Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատրէյն Օլպայթ էրիտանացի անոր պաշտօնակիցը՝ Ռոպին Քուք կիրակի օր լոյս տեսած յօդուածի մը մէջ, պահանջներու արտայայտած են ծրագիրին:

Ըստ բրիտանացի պաշտօնատարներու, յօդուածը ամբողջական կ'որակարարութիւնը կը վայելէ նախագահ Պիլ Կլինթոնի: «Եւրոպայի ապահովութեան եւ պաշտպանութեան քաղաքականութիւնը Պրիւսէլէն ղեկավարուած էրոպական բանակ մը չէ եւ պիտի չըլլայ», կ'ըսեն Օլպայթ եւ Քուք յօդուածին մէջ, աւելցնելով, որ անիստ Եւրոպան կամ Ատլանտեան կիւնակցությունը երկփեղկող ծրագիր մը չէ:

ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար Ճորձ Ռոպրթսըն, որ Բրիտանիոյ պաշտպանութեան նախկին նախարարն է, կիրակի օր լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ նոյնպէս շեշտած է, որ որեւէ պատճառ չկայ, որ ման ուժ մը սպանալիք ըլլայ ՕԹԱՆին:

Ան շաբաթավերջին լոյս յայտնած էր, որ կիւնակցությունները մինչեւ այս տարեկերէն պիտի կարենայ Եւրոպական Միութեան հետ համաձայնություն մը գոյացնել նոր ուժին գծով, հակառակ թուրքիոյ պայրոյթին:

ՕԹԱՆ ընդունած է Ե. Միութեան խախտումները եւ սարքերու կիրառական մարպի ծրագրում ու տեղեկություններ հայթայթել նոր կազմութիւնը ուժին համար:

ՕԹԱՆի անդամ թուրքիա, որ կ'ուզէ Ե. Միութեան անդամակցիլ եւ նոյնիսկ առաջարկած է կիւնտր հայթայթել նոր ուժին, կը պնդէ, որ աւելի մեծ դերակատարութիւն կ'ուզէ ունենալ ուժին կողմէ տրուելիք բան մի որոշումներու մէջ:

ՌՈՒՍԻԱ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՊԱՏՐԱՍ Է

Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով շաբաթավերջին

յայտնած է, թէ Ռուսիա պատրաստ է Ե. Միութեան կիւնտրական նոր ուժին հետ գործակցելու:

«Բացարձակապէս բնական կը նկատենք, որ Եւրոպայի իր սեփական ուժը ունենայ իր սեփական ապահովությունը երաշխաւորելու համար», ըսած է Իվանով Պերլինի մէջ տեղի ունեցած համագումարի մը ընթացքին: «Եւ տագնապալի կացութեան մը պարագային պատրաստ ենք շիջուկը խիստ յարձակողականի ենթարկուած է ան: Ե. Միութեան երկիրները անցեալ շաբաթ յայտարարած էին, թէ մինչեւ 2003

Միութեան անդամ 15 երկիրներէն 60 հազար կիւնտր պիտի կուտակեն՝ շրջանային եւ մարդասիրական տագնապներով պահելու համար:

Իվանով ըսած է, թէ Ե. Միութեան գործողություններուն ռուսական մասնակցութեան հարցը պիտի ուսումնասիրուի եւ «վստահ եմ, որ սահմաններ միացեալ մասնակցութեան համար լաւ առիթներ պիտի ստեղծէ» Եւրոպայի մէջ կայունութիւնը եւ ապահովութիւնը ամրապնդելու գծով», շեշտած է ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԼՈՒՔԱՇԵՆՔՈ ԿԸ ՊԱՇՏՏԵԼԱԶՐԿԷ ԱՊԱՐՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՏԵՆԱՍԱՐՆԵՐ

ՄԻՆՍԿ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Պրիւտուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո Երկուշաբթի օր ապահովութեան մարզի բարձրաստիճան պաշտօնատարներ պաշտօնազրկած է:

Անոր մամուլ գրասենեակին քարտուղարը՝ Նիքոլայ Պրիւսէլ, յայտնած է, թէ արտաքին գործոց նախարարը ստանձնած է Ապահովութեան Խորհուրդին պատասխանատուութիւնը եւ Լուքաշենքոյ անձնակազմի կիւնակցութեան հրամանատարը փոխարինած է ապահովութեան ոստիկանութեան պետը:

Երկիրն ընդհանուր դատախազը նոյնպէս պաշտօնազրկուած է: «Անոնք պաշտօնազրկուած են այլ գործեր ստանձնելու համար», ըսած է Պրիւսէլը:

Սակայն, աւելցուցած է ան, կարելի չէ անտեսել այն հաւանականութիւնը, որ նախագահին այս հակազդեցութիւնը կապուած է անոր զգուհութեան, ինչ կը վերաբերի ոճրային բազմաթիւ հարցերու, որոնք առանց արդարացումի շատ երկար առեւ ձգձգուած են:

ԱԼԵՔՏԵՐԻՈՅ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՏԵՆԱՍԱՐՆԵՐ

ԱԼԵՔՏԵՐԻԱՅԻՆԵՐ ԶԱՐԶԱՐԱԾ ՅԻՐԱՆԱՍՑԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆԵՐ ՂԱՏԵԼՈՒ ՊԱՅԱՆՁ

Ալեքերիոյ անկախութեան պատերազմին (1954 - 1962) ֆրանսական բանակին կողմէ սպանուած ալեքերիացիներուն ընտանիքները կը պահանջեն, որ պատերազմին ընթացքին ալեքերիացիները չարչարած կիւնտրականները դատական հետապնդումի ենթարկուին:

Շարք՝ էջ 10

ԵՐԿՈՒ ԳՈՐԵԱՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԻՆՏ ՍԸ

ՍԷՆՏՆԱ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Հարաւային Բորնեո ընդունած է Հիւսիսային Բորնեոյ կողմէ ներկայացուած ծրագիր մը, որ կ'առաջարկէ բանակցություններու չորրորդ ռաունտ մը կայացնել Դեկտեմբեր 12ին, յայտարարեց Հարաւային Բորնեոյ միացման նախարարութիւնը Երկուշաբթի օր:

Նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, որ նախարար Փարք ժաէ Բիու հետգիր մը յղած է Հիւսիսային Բորնեոյ իր պաշտօնակիցին՝ հաւանութիւն տալու համար առաջարկին: Բանակցությունները նախատեսուած էին Երեքշաբթի օրուան (այսօրուան) համար, սակայն անցեալ շաբաթավերջին Փիոնկեանի առաջարկէ մինչեւ Դեկտեմբեր 12 յետաձգել բանակցությունները, որոնք նախարարներու մակարդակի վրայ են:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ՊԱՆՔՈՒՆ. 151 հոգի մահացած է Ինտոնէ-պիոյ, Թայլանտի եւ Մալէզիոյ մէջ, ուր տեղափոխութեան անձրեւները ողողումներ եւ հողային սահմաններ պատճառած են:
- ՆԻԿՈՍԻԱ. Տեղատարաքի անձրեւներ, կարկուտ եւ սարձեր քամիները երէկ հարուածեցին Կիպրոսը՝ բնակիչները քանդելով եւ ծառեր արմատախիլի ընելով:
- ՊԱՔՈՒՆ. Կապի խողովակի պայթում մը մէկ կողմից կ'արգիլէ մայրաքաղաք Պաքուի մէջ: Արկածը տեղի ունեցած է Կիրակի գիշեր, ինչ յարկանք շէնքի մը մէջ:
- ՊԱՅԻԱ. Պոլիպարիոյ մաքսատնային պաշտօններ 31 քլ. հեռոյ զբաւած են թուրքիոյ սահմանին վրայ: Թմրեցուցիչը թուրքիային Այպահիա կը մաքսանենգուէր ճամբորդատար օթոպիւսով մը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷՉ ԿԱՅԱՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Քրեթիկ կը քուէարկէ:

ՕՐԱՎԱ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Քանատացիները Երկուշաբթի օր ուղղուեցան քուէարկութեան կեդրոնները ընտրելու համար իրենց նոր խորհրդարանը: Կանադիայի այս ընտրութիւններէն դժգոհ է ժողովուրդին մէկ մասը, որ հարցականի տակ կ'առնէ անոնց անհրաժեշտութիւնը, երբ վարչապետ Ժան Բրեթիէն տակաւին մէկուկէս տարի ունէր աւարտելու համար հնգամեայ նստաշրջանը:

Հարցախոյլներու նախատեսություններուն համաձայն՝ Բրեթիէնի Ապահովական կուսակցությունը պարտութեան պիտի մատնէ աջակողմեան ընդդիմադիր Քանատական Դաշնակցությունը, զոր կը ղեկավարէ Սթեֆան Եյ: Յաղթանակի պարագային Բրեթիէն պիտի ապահովէ վարչապետութեան երրորդ նստաշրջան մը:

Ընտրություններու սկզբնական արդիւնքները կրնան յստակ դառնալ Երեքշաբթի առտու (այսօր):

ԶԻՆԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԱՇԽԱՏ ԿԵՐՑՆԵԼ ԻՐԱՔԻ ԴԵՍ ՀԱՍՏԱՏՈՒՄՈ ՊԱՏԺԱՍԻՉՈՑՆԵՐԸ

ՊԵՅԾԻՆ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինատանի ղեկավարութիւնը Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ազիզի ըսաւ, որ Պէյքինի աշխատանք պիտի տանի ջնջելու համար Պաղատի ղեմ հաստատուած պատժամիջոցները, հարողոց պատկերասփռու պետական կայանը:

Յիշեալ աղբիւրը, որ կը մէջընդմիջ արտաքին գործոց նախարար Թանկ Միսկիւտանը, յայտնեց, որ Զինատանը կը բաժնէ Իրաքի ժողովուրդին տառապանքը, որ հետեւեալն է ստանձնեալ պատժամիջոցներուն: Թանկ քննադատեց այն արեւմտեան կարգ մը երկիրները, որոնք «այսօր յանգ ցօտիներ» հաստատած են Իրաքի հիւսիսային եւ հարաւային շրջաններուն մէջ: Թանկ խոստացաւ, որ Զինատան կարելի եղած բոլոր միջոցներուն պիտի դիմէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ, վերջնելու համար պատժամիջոցները:

ՌՈՒՍԻԱ

ՓՈՒԹԻՆ ՂԱՏԱՒՈՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՕՐԵՆՔԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ

ՄՈՍԿՈՒ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Երկուշաբթի օր երկրին դատաւորներուն յայտնած է, թէ գերզարգացած են եւ անբաւարար կերպով կը վճարուին, սակայն անոնց կող ուղղած է, որ աւելի պորժօն ձեւով փորձեն օրէնքի իշխանութիւնը հաստատել փառսութիւնը զիմազրաւող երկրին մէջ:

Փութին «օրէնքի բռնատիրութիւն մը» խոստացած է, ըսելով, որ այդպէս պէտք է ընել, որ երկրին օրինական ղրութիւնը գործէ եւ վերջ տուի տարիներու անօրինութեան եւ քառասուն տարի վիճակին՝ խորհրդային Միութեան տապալումէն ետք:

Ռուսիոյ նախատեսման մէջ քննադատներ կ'ըսեն, թէ զ պատկան մարզին բարեկարգումը բանակի է աւելի մեծ կարգ ու կանոն բերելու իր ծրագիրներուն համար, թէեւ անոնք կը նշեն, որ ցարդ մեծ յառաջդիմութիւն չէ արձանագրուած այս գծով:

Դատաւորներու համագումարի մը ընթացքին, Փութին ըսած է, թէ իր կարելին կ'ընէ գործակի կանգնելու համար հետզհետէ թափ ստացող ոճիրներու ղեմ դատաւորներու պայքարին, սակայն, թէ ինքնին զրուցելու:

Շարք՝ էջ 10

ՆՈՐՎԵԿԻԱ ԱՇԽԱՐԻ ԱՄԵՆԵՆ ԵՐԿԱՐ ՓԱՊՈՒԴԻՆ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՍԱՐՈՒԵՑԱՒ

ՕՍԼՈ, 27 (ՌՈՅԹԸՐԸ).- Նորվեգիոյ Հարաւ Թագաւորը Երկուշաբթի օր բացումը կատարեց աշխարհի ամենին երկար փապուղիին, որ 24,5 քմ. է: Փապուղին կը կապէ մէկ մասը մայրաքաղաք Օսլոյն արեւմտեան շրջանի Պերկէն քաղաքը տանող մայրուղիին: Փապուղին կը կտրէ լեռնաշղթայ մը: Լակերտալի փապուղիին կառուցումը 113,1 միլիոն տոլար արժած է: Պաշտօնական բացումին քանի մը օր առաջ իրեն մը ծագած էր փապուղիին անցնող ժամպիւսի մը շարժակի մէջ: Ճամբորդները անմիջապէս դուրս բերուած են փապուղիէն: Չոհեր ու վիրաւորներ չեն սրճանագրուած:

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ «ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ»Ը

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ «ՎԵՆՍԵՆԻ ԱՆՏԱՌ»

«ԿԱՆԱՐԴԱԿԱՆ Է ՎԵՆՍԵՆԻ ԱՆՏԱՌ»

1920ական թվականներուն Սփիւռքը ծնունդ տուաւ հայ ժողովուրդի իմացական ու հոգեկան կեանքը իր ներքին տագնապին մէջ վերլուծականներէն երգող քերթողին, առանձնալատուկ ստեղծագործութեան տէր բանաստեղծին, որ ստանձնեց մտային անվերջ թափառումներով կեանքի լարելիւթիւնն մէջ չընկնելու առաքելութիւնը՝ «Իմանալու համար եղելու թիւնը» եւ հոլովոյթը աշխարհի խղճմտանքին»:

Այդ քերթողը Նիկողոս Սարաֆեանն է, բառին բուն առումով արուեստագէտ բանաստեղծը, որ իր անխնայ գրելով կրցաւ մտածական թրթուրով վերածել քերթողութիւնը, որ ստացաւ բացառապէս ինքնատիպ ձեւ ու կառուց՝ այս քերթողի զորոյթին տակ:

Կանդորդ առանք իր գործերէն «Միջերկրական»ին եւ «Վենսենի Անտառ»ին:

«Միջերկրական» հատորը քերթուածներու հաւաքածոյ մըն է՝ տպուած Պէյրութի մէջ, 1971ին: 40 էջերէ բաղկացած այս գրքոյնը կը բովանդակէ եօթը քերթուածներ, որոնց առաջին երեքը՝ «Յառաջբան», «Ալիքներ» եւ «Ժայթք», կը կազմեն «Միջերկրական»ի բանաստեղծութիւնը, որ իր անունը տուած է ամբողջ հատորին:

Միւս չորս կտորները կը կոչուին՝ «Լուսածագ՝ Ծովային Ալպեաններու», «Անտառին մէջ», «Լուսին լոյս», «Վերացումի մասը»:

Թէեւ գրուած տարբեր ժամանակներու մէջ՝ 1957էն մինչեւ 1970, այս եօթը կտորները կը կազմեն ամբողջութիւն մը, այն իմաստով, որ անոնց ներշնչման աղբիւրներն էին՝ մարդը, հայ մարդը՝ տիեզերքի եւ բնութեան միջեւ:

Այս հատորին մէջ տիրապետող երեւոյթը ծովն է: Հայ գրականութիւնը, ընդհանուր առմամբ, չէ զարգացուցած ծովու թեման: Հետեւաբար կարելի է ըսել, որ Սարաֆեանի այս գործը նորութիւն մը կը բերէ մեր գրականութեան, եւ իր մով ծովը կը դառնայ ներշնչման աղբիւր եւ գրականութեան նիւթ:

Ծովերու մէջ ամէնէն բանաստեղծականը անկասկած որ Միջերկրականն է՝ սակայն ի՞նչ կը ներկայացնէ Միջերկրականը հայ բանաստեղծին համար:

«Միջերկրական»ը բանաստեղծին հայրենիքէն հեռու ապրելու 50 տարուան բաժանումին մեկամղձոտ երգն է, երկտառագրութեան երազներու ոգեկոչումը:

«Միջերկրական, Արեւելք՝ Արեւմուտքի մէջ, երկիր... եւ մանկութեան աշխարհիս մասն ծայրեր եմ կարմիր, Այդ աշխարհիս ջուրերուն մասն ծովն է իր կոծով: ... Այստեղ տեսածս է մասն՝ մանկութեան մէջ տեսծիս, մաքուր, խաղաղ, անահման, եւ մասն է ապագայ աշխարհի մեր երազին»:

Բանաստեղծին համար Միջերկրականը չի դադարել լոյս ու խայտառք ըլլալէ, որովհետեւ բնութիւնը անտարբեր է իր մտայն հոգեվիճակին: Նոյնիսկ վերջերս անկարող է դադարեցնելու համայնական

եւ մարդկային խանդավառութիւնը: Տողբուն մէջ կը լսենք գոռում, աղաղակ, որ կը թնդացնէ ժամանակներու անդաստանները: Յուսալքուած բանաստեղծը միշտ կը շարունակէ իր մտայն ու սրտում երգը, ուր հետզհետէ անհատական ընդթ ունեցող մղձաւանը կը դառնայ համազգային: Հայ մարդն է, հայ բանաստեղծը, որ կը տառապի, որ կը վերջիչէ այն դժոխային եւ սեւ օրերը, որոնք պատեցին իր ամբողջ ազգը՝ դիակներ եւ կմախքներ ձգելով իրենց ետին... Բանաստեղծը կը լսէ անցեալին կանչը, որուն քաղցրութիւնը դառն կ'ընէ ներկան:

«Կան երազներ, կան սակայն եւ երազել չեմ կրնար, մինչ հիմ երգեր, կարօտներ եւ աղօթքներ կը յիշեմ, եւ կը յիշեմ ծնունդն այդ եւ կերտումներ հոյաշէն: Անցեալ, գալիք կ'ընեն դառն...»:

«Միջերկրական» այնքա լիբերդացած դրսեւորումը կը բերէ Սարաֆեանի տագնապահար հոգեվիճակին. հոս բանաստեղծը այն անձն է, որ գտած է աղբիւրը իր հոգիի խոռվիքին, բայց...

«Միջերկրական»ի թրթուր լարը կարօտի թեման է: Այդ կարօտէն չտառապելու համար բանաստեղծը կը փորձէ հեռանալ անցեալէն, բայց իր հայրութիւնը խղճի ձայնին պէս կը հալածէ զինք եւ կը բաժնէ միջավայրէն եւ շրջապատող մարդոցմէ, կը սկսի տառապանքը, որ բանաստեղծին մտածողութեան հետ երկար բախելէ ետք գարմանալիօրէն կը յանգի լաւատեսութեան՝ հաւատք մարդկութեան եւ հայրութեան արժանիքներուն վրայ:

Բնոյթով քնարերգական այս հատորը սփիւռքահայուն տուածն է, ինչպէս նաեւ՝ փիլիսոփայականօրէն ընկալուած տագնապ մը, որուն հետ երկար տարիներ ապրած է Սարաֆեան:

«Լոյսն այդ կրնայ խանդավառ, բարձր ընել մարդն ու երկ Ատրուկ էր դառն, ընել զայն գիտակից եւ բարձրորակ, Բայց կ'առնէ զայն նոյն ատեն իր հեղձուցիչ ճանկի մտակ, Կը պահանջէ, իր հուներն վեր չբռնի ան երեք»:

Սարաֆեանի տողերը չեն շոյեր մեր գգայնութիւնները, չեն քնացներ մեր հոգին թմրեցուցիչ օրօրներով: Անոնք ունին ժայռերու կարծրութիւնը եւ պողպատին ճկունութիւնը: Անոնք կը վերադառնան, կը խոցեն, անհանգիստ կ'ընեն մեզ:

Սարաֆեան յարողած է խորքին եւ ձեւին տալ համերաշխ ընթացք մը՝ առանց գոհելու մէջ միւսին:

Նիկողոս Սարաֆեանի արտայայտութեան իր ձեւով, մնալով հանդերձ կարելի պարզութեան մէջ, խորքով իմացապաշտ քերթողն է, մէկ խօսքով՝ փիլիսոփայականստեղծը, որ մեծապէս յաջողեցաւ տալ միջազգային չափանիշի համող գործեր:

Ս.

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագործ խմբագրատուն՝ ծանուցումները բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 5:

ՀԱՄԱՍՏԳՈՒՄԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՍԱՏՈՒՅՈՒՄ ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ «ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ»- «ՎԵՆՍԵՆԻ ԱՆՏԱՌ»

•ՍԱՅԻՎՆԵՐ ԵՒ ԵՐԱԾՏՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 29 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:30ին, Ն. Փայլանեան ձեռնարանի «Վասպուրական» սրահին մէջ:

ՀՐԱՒԷՐ

Ս.Ե.Ս. ՊԱՐԱՇԱՆԴԷՍ Պ. Ս.

Ժողովրդային, աշուղական եւ յեղափոխական երգերու ձոխ յայտագիրով

Մասնակցութեամբ՝ Հանրայայտ սիրուած երգիչ՝ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԵԱՆԻ Կազմակերպութեամբ՝ ՍԵՄԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

•Տեղի կ'ունենայ Կիրակի 3 Եւ Ուրբաթ 8 Դեկտեմբեր 2000ի երեկոյեան, Ա. Ս. Ժ. Տան «Անի» ձաշարահէն ներս:

•Տոմսերը պահովելու համար կրնաք դիմել Ա. Ս. Ժ. Տան, Հեռ.՝ 4641881 - 4463902

«Սիրելի հայրենակիցներ, մենք հաւատում ենք ձեր բանականութեանը», հայրենի Արցախի Ակադեմիայի մասին մեր անսահման սէրը, նրա լուսատու ապագայի Ակադեմիայի մեր տենչանքները պիտի կենսի կոչուեն հայրենիքում: «Դիզակ» Հայրենակցական Կարգադրութեան Միութիւնը պատրաստ է սատար կանգնել ձեզ, հայրենի բնակավայրեր վերադառնալու ձեր հայրենասիրական ջանքերին:

Այսպիսի կոչով է ւարտուում «Արցախի համար գոհուած դիզակցիներ» խորագրով գիրքը:

Հեղինակները՝ պատմաբան Հրանդ Աբրահամեանը եւ Արցախի յուշարձաններին Անիքում մի շարք ուսումնասիրութիւններ հեղինակ Ծառէն Մկրտչեանը, գոհուածներին մերկայացնելուն գուզընթաց, գիրքը հասցեագրել են ողջերին: Այն ողջերին, ովքեր այսօր վերաշինում են իրենց ազատագրուած բնօրրանը, նրա սահմանային դիրքերում պաշտպանում փխրում ու տագնապալի խաղաղութիւնը: Եւ այն ողջերին, ովքեր հեռացել են արհիւնով ազատագրուած հայրենիքից: Թէեւ գիրքը դիզակցիների մասին է, սակայն նաեւ ւաւելի լայն համագային հիմնախնդիրներ է արծարծում: Այն հասցեագրուած է նաեւ Արցախի միւս շրջաններից, Հայաստանից, յատկապէս նրա սահմանները բնակավայրերից հեռացածներին: Գուցէ դեգերումների ճանքաներին նրանք մտնացնէ՞լ են իրենց հայրենիքը, գուցէ ապաստան են աշխատանք որոնելիս սթափուեն՞ եւ իրենք իրենց հարց տան բանաստեղծի այս տողով՝ «Ո՞րն է, Բաքո, մեր հայրենիք...»:

Դիզակը Հարաբաղի հինգ մեկթորթիւններից մէկն է, որի տարածքի մի մասը խորհրդային տարիներին վերանունանուեց Հարութի շրջան: Գրքում Դիզակի օրինակով ցոյց է տրուած երկրամասի բնիկ հայկական լիճելը, փաստարկելով քրիստոնէութեան տարածման անխանկար շրջանում Գրիգոր Լուսատուի թող Գրիգորիսի գործունէութիւնը, պատմաճարտարապետական յուշարձանները:

Շրջանում արձանագրուել են ւաւելի քան երեք հազար տարբեր բնոյթի յուշարձաններ, նախնեաց ճշխարներ, քարայր-կացարաններ, վանական, եկեղեցական պաշտամունքային եւ արտադրական - ճարտարագիտական կառոյցներ:

Օտարները արցախցիների, նրանց թուն՝ նաեւ դիզակցիների ազատագրական պայքարի սկիզբը համարում են 1988ը: Իսկ մենք գիտենք, որ նման պայքար մղուել է դարերի ընթացքում, ինչպէս նաեւ՝

ցութեան հետ «հոգեբանական խաղեր» կը ստեղծէ: Սարաֆեան այդպէս վեցնէ՞ր ծառերէն կախուած կարծէք կը փորձէ գտնել ինքզինքը եւ հասկնալ իր «ես»ը, որ ծառերուն պէս երկրի մի է յաճախ: Ան իր հոգին կը վերլուծէ գիրքերու խաղով, կը հասկնալ հիմնէն եկող փորձառութիւններն ու անձկութիւնները եւ ներկային մէջ կ'աւարտէ հիմնէն եկող հեքիաթը, որովհետեւ անցեալը կը հակադրուի ներկային, ինչպէս որ իր մանուկ հոգին կը հակադրուի իր հասուն մարդու իմացական աշխարհին: Սարաֆեանի «ես»ի փնտրութիւն մէջ ի յայտ կու գայ «սփիւռք»-ի հոգեբանութեամբ թրծուած «ես»ը, որ արտաքին կ'ապրի նաեւ անտառին կախարհաբէտ պարտադրուած իր վերացական աշխարհին մէջ: Անտառին մէջ կը դեգերի - թափառական հայրը, որ կը սիրէ իր տեղը փոխել միշտ եւ քակել տարածութիւններու անսահմանութիւնը: Սարաֆեան կը սիրէ նաեւ ընթացալ դէպի «հոգիին խորքերը»՝ բաժնուելով ինքզինքէն եւ տիրելով ինքզինքին, որովհետեւ կը հաւատայ, թէ «իրական, յանդուգն եւ նոյնիսկ իրական աշխարհակալը այն է, որ ինքզինքին դէմ կ'ելլէ, առանձնութեան մէջ, իր շարաւիճ խորը, մահուան նայածքին տակ...»:

Եւ կախարհաբէտ կը շարունակուի... Սարաֆեանի պատկերներուն ուժակաւորութիւնն անգամ կախարհական է: Հակադր եզրերու միացումով, «գեղեցիկ խաբէրայութեամբ» մը քեզ կը տանի միմեծի ծայրագոյն անագուստ, ուր անտառը իր բազմադէմը ծառերով կը սիւնայ քեզի, դուրս քու բազմաձայն աշխարհով կը միանաս բազմաձայն տնօրէնացող գաղտնիքին ու ծառերու հոտառութեան ներքեւ, Սարաֆեանի բառերուն խորունկին թաւայումին հետ կը գտնես ինքզինքը բազմադէմը տարրերու միանումն ընդլայնուող ճշմարտութեան դէմ յանդիման, այն ճշմարտութեան, որուն բացալայնուած գործը ինքն ալ հետամուտ է: Թերեւս ստոր համար է, որ ան կը տատանի իր մտածումներուն ամբողջ երկայնքին եւ պատկերներու հակասութեամբ կը պնդէ մտածումները: Սարաֆեանի լեզուն միշտ է ինքզինք գտնելու, անոր գեղեցկութեամբ դուրս կ'իջնես կամ կը բարձրանաս տեսանելիէն անդին, ու անտառին գեղեցկութեան ամբողջ տարածքը չափելով, հանդիպելով մեղուներու օձային տիպարներուն, Որբէններու երգերուն, Համալէթի եւ Օֆելիայի թատերական կերպարներուն, գարնունելով մոգական ալիքներուն եւ մելանի ճշմարտութեան, դուրս ալ կը փնտրես «իրական էջ»-ի՝ հոգիի պարապը ճշմարտութեան լոյսով լեցնելու:

«Կախարհական է վեցնէ՞րի անտառը»:

ՍՆՆԻ ԱԲԼԵՃԵԱՆ

ԳԻՐԲ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶՈՀՈՒԱԾՆԵՐԻՆ, ՀԱՍՅԷԱԳՐՈՒԱԾ ՈՂՋԵՐԻՆ

խորհրդային տարիներին: Գրքում բազում փաստերով, որոնցից են բնակչութեան աճի տուեալները, հիմնաւորուած են այդ պայքարի պատճառները: Այսպէս, Դիզակում (Հարութի շրջանում) 1824 թուականին կար 25,210 հայ բնակիչ, 1895ին՝ 3, 235, 1912ին՝ 36,198: Խորհրդային տասնամեակներին յարակից ազրպէյճանական շրջանների բնակչութեան թիւը ետապատկուել ու բազմապատկուել է, իսկ Հարութի շրջանում, 1912 թուականին 36,198ից 1989 թուականին մարդահամարի տուեալներով, հասել 14,000ի, աճելու փոխարէն նուազել մօտ երկուսուկէս անգամ: Պատճառը ազգային ու ընկերային ճնշումներն էին, Դիզակը, Արցախը - խաղաղ՝ միջոցներով հայաթափելու հեռահար նպատակը: Կիրառուում էր այն «հարուստ» փորձը, որը ձեռք էր բերուել Նախիջեանը հայաթափելու ժամանակ:

Գրքի հեղինակները ներկայացրել են դիզակի 136 խաղաղ բնակիչների անուն-ազգանունները, որոնք հրետակոծութիւնից, գնդակներից գոհուել կամ տանջամահ են արուել այդպիսով, դաշտերում, կայարաններում, իրենց բնակարաններում: Միայն Դիզակում տասնեակ գիւղեր դատարկուեցին: Ծերերին, կանանց ու երեխաներին ըջու էին դէպի Հայաստանի սահմանները, իսկ կոտորածից փրկուած անզէն երիտասարդները փախու լեռներն ու անտառները: Ահա այս պայմաններում էր, որ Հայաստանի, Սփիւռքի կամ տարիների աշակցութեամբ Արցախի երիտասարդները համախմբուեցին, ջոկատներ կազմեցին եւ ազատագրեցին իրենց բնակավայրերը: Գրքում ներկայացրու են այդ պայքարում գոհուած կամ անյայտ կորած 333 դիզակից ազատամարտիկների յուսանկարներն ու հակիրճ կենսագրութիւնները: Այդ թիւը, սակայն, վերջնական չէ. հեղինակները շարունակում են որոնել ու համարել ցուցակը:

Գրքի վերջում, ինչպէս վերը նշեցինք, «Դիզակ» Հայրենակցական Միութիւնը կոչ է անում հայրենի բնաշխարհից հեռացած դիզակցիներին՝ վերադառնալ, մասնակցել ւաւերուած գիւղերի վերականգնմանը, երկրամասի ներուծի լիարժեք օգտագործմանը, մարտերով նուաճած պետականութեան արարանները, որի համար իրենց կենսաբանութիւնները անհատական են:

ՍԱԻՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

«Երկիր»

ԳԻՏԱԿԱՆ

«ՄՏԲԻ ԱԶՔ» ՄԸ ԻՍԿԱՊԵՍ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Կ'ԸՍԵՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

«Մտքի աչք» մը իսկապես գոյություն ունի, այն իմաստով, որ ուղեղային բջիջներ կը պահեն եւ կը վերջիջեն տեսողական յստակ պատկերներ՝ անձի մը անոնց նայելէն երկար ատեն տեսք կ'ըսեն Նոյնմբերի կէտերուն հրապարակաւ երկու տարուան գիտական ուսումնասիրութեան մը արդիւնքները:

Ուսումնասիրութեան ձեռնարկած են Լոս Անճելէսի Քալիֆորնիա համալսարանին եւ Քալիֆորնիա Ինսթիթյուի ֆ թեքնոլոգիի մասնագէտներ, որոնցմէ Իցնաք Ֆրայտ կ'ըսէ, թէ տեսողական պատկերներ «կրնան ստեղծուիլ մեր մտքի աչքին մէջ՝ պատկերներու բացակայութեան»:

Ֆրայտ կը յայտնէ, որ ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ ուղեղային այն բջիջները, որոնք կը գրգռուին, երբ անմը Մոնա Լիզային պատկերը կը դիտէ, նոյնպէս կը գրգռուին, երբ անմը կը խնդրուի երեւակայել Մոնա Լիզային:

Ուսումնասիրութեան ընթացքին հետազոտողները ելեկտրոններ գետնաշաղկապներով տեսողող 9 հիւանդներու ուղեղներուն մէջ՝ ճշդելու համար այն գոտին, որ անբնականաձօրէն կը գործէ: Ելեկտրոնները գետնաշաղկապներով կը կապուին մարդու մարմնին եւ ընկերային վարուելակերպի կապուած է:

Գիտնականները արձանագրած են ուղեղային անոնքներուն 276 բջիջներու գործունեությունը, հիւանդներէն պահանջելէ տեսք, որ անսպասելի իրենց ցոյց տրուած պատկերներ երեւակայեն:

Անոնք գտած են, թէ ուղեղին կարգ մը գոտիներուն մէջ այդ բջիջներէն այս կամ այն մէկը իր գրգռութեան ատիւնները կը փոխէ՝ հետմաձայն անձին երեւակայած պատկերներուն:

Ֆրայտ կ'ըսէ, որ երբ մէկը բանի մը կը մտնի, անիկա իսկապէս «կենդանի» է, իսկ երբ անձը աչքը կը օղտ գայն երեւակայելու համար, պատկերը այնքան ալ «կենդանի» չէ: «Հետեւաբար մեզի համար անակնկալ էր, որ ուղեղային բջիջները գրեթէ նոյն համեմատութեամբ կը հակադրեն երկու պարագաներուն», դիտել կու տայ ան:

Ֆրայտ կը յայտնէ, որ ուսումնասիրութեան արդիւնքները հազուադէպ ատիւն մը կ'ընծայեն՝ առանց արտաքին մարտահրէժ տեսողական գրգռութեան, զուտ մտային վիճակի մը մէջ:

գտնող մարդկային ուղեղին գործունեությունը ուղեղակիրէն դիտելու:

«Այս գործունեությունը կրնայ ներկայացնել

ԶԱՅՆԵՐԸ ԿՐԻՄԱՆ ԹԱՓ ՏԱԼ ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ

Լսողութիւնը եւ տեսողութիւնը շատ ակտիւ սերտօրէն կապուած են իրարու, քան ինչ որ գիտնականներ կ'ենթադրէին նախապէս. ասիկա կը հաստատեն մասնագետներ, որոնք գտած են, թէ ձայնները կրնան թափ տալ ամէն ինչ ակտիւ յստակօրէն տեսնելու մարդոց կարողութեան:

«Գտնած, թէ ինչ որ մարդիկ կը լսեն, մեծ ազդեցութիւն ունի անոնց տեսածին վրայ», կ'ըսէ Զալիֆորնիա համալսարանի մասնագետներէն Ճոն Սքոտը:

Հետազոտողներ գիտեն արդէն, որ ուղեղի իրեն հասած բազմաթիւ տեղեկութիւնները «կը գտէ» մէկորի ձգելով ոչ զլիստոր տեղեկութիւնները:

Սքոտը խոսի խմբակը ցոյց տուած է, թէ ինչպէս ուղեղը զգացում մը կ'օգտագործէ լսողի մը թափ տալու համար:

